

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 22/1

ք.Երևան

20 ապրիլի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ Ա/Ձ Անդրանիկ Խաչատրյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Ա/Ձ Անդրանիկ Խաչատրյանը հայտնում է, որ ժամանակին ծանուցագիր չստանալու և տեղեկացված չլինելու պատճառով սահմանված ժամկետում չի ներկայացրել 2018թ. շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանդիսանում է բազմազավակ ընտանիքի հայր և ընտանիքի եկամտի միակ աղբյուրը, Ա/Ձ Անդրանիկ Խաչատրյանը խնդրում հնարավորություն ընձեռել գործունեությունը շարունակել շրջանառության հարկի դաշտում:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Ա/Ձ Անդրանիկ Խաչատրյանը ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 31.10.2012թ.:

Հարկային մարմնի կողմից 2015թ. ընթացքում Ա/Ձ Անդրանիկ Խաչատրյանին սահմանված կարգով ծանուցվել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու մասին: Մասնավորապես, Ա/Ձ Անդրանիկ Խաչատրյանը 21.04.2015թ. ստորագրությամբ ստացել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ ծանուցագիրը և 2015թ. մինչև 2017թ. ընկած ժամանակահատվածում համարվել է շրջանառության հարկ վճարող:

Գործունեության բոլոր տեսակների մասով Ա/Ձ Անդրանիկ Խաչատրյանի իրացման շրջանառությունը 2017թ. ընթացքում կազմել է 5.520.405 դրամ:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով հստակ սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով

սահմանված դեպքերի) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Անդրանիկ Խաչատրյանի կողմից մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին չի ներկայացվել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, հետևապես 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող չի կարող համարվել:

Ինչ վերաբերվում է դիմում-բողոքում բերված այն պնդումներին, որ ժամանակին ծանուցագիր չստանալու և տեղեկացված չլինելու պատճառով Ա/Ձ Անդրանիկ Խաչատրյանի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել 2018թ. շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, ապա նշված պնդումները հիմնավոր չեն, քանի որ ինչպես որ վերը նշվել է, Ա/Ձ Անդրանիկ Խաչատրյանը 21.04.2015թ. ստորագրությամբ ստացել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու անհրաժեշտության վերաբերյալ ծանուցագիրը: Թե ներկայացված դիմում-բողոքում, թե նիստի ընթացքում չի ներկայացվել հիմնավոր ապացույց՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառների վերաբերյալ:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ա/Ձ Անդրանիկ Խաչատրյանի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ